ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

10.03.2023

Հարգելի տիկին ՁԵԲԵՁՅԱՆ,

Սույն թվականի մարտի 6-ին ուղարկված Ձեր հարցերին ի պատասխան տեղեկացնում եմ՝

1. Բնակելի տուն կառուցելու նպատակով ամուսնուս ընտանիքին պատկանող հողամասի մի հատվածը ամուսնուս տատիկը նվիրաբերել է ամուսնուս, վերջինս էլ ինձ՝ միասին դիմելու հիփոթեկային վարկի՝ իբրեւ համավարկառուներ:
   Հողամասի վրա մինչեւ տան շինարարության սկսելը առկա էր կիսակառույց ավտոտնակ, որը շինարարական աշխատանքների սկսվելուց հետո ապամոնտաժվել է, սակայն պահպանված է սեփականության վկայականում, ուստի եւ հայտարարագրված է:
2. Նվիրատուն ամուսինս է:
3. Հայտարարագրում նշված 8 մլն-ը գերազանցող գույքը վերը նշված հողամասն է, որը նվիրաբերել է ամուսինս; արժեքը գնահատել է բանկը՝ հիփոթեկ ձեւակերպելու գործընթացում, որի հիման վրա տրամադրվել է հիփոթեկը (առկա է ամուսնուս հայտարարագրում, քանի որ ամուսինս եւս հայտարարատու անձ է); նվիրատվության նպատակը՝ իբրեւ ամուսիններ դառնալ համասեփականատերեր եւ դիմել հիփոթեկի՝ տան կառուցման համար:

Կարող եմ ավելացնել նաեւ, որ հողամասը 1940-ական թվականներին ձեռք է բերել ամուսնուս պապը Լիբանանից Հայաստան հայրենադարձվելուց հետո եւ դրա մի հատվածում կառուցել է տուն, որտեղ այժմ էլ բնակվում է ամուսնուս ընտանիքը: Նույն հողամասի մյուս մասում, որի համասեփականատեր ենք այժմ ես եւ ամուսինս, հիփոթեկային միջոցներով կառուցում ենք տուն, որի շինարարությունը դեռեւս ավարտված չէ:

Հ.Գ. Ձեր հարցման մեջ նշել եք, որ 2018թ.-ին պաշտոնը ստանձնելիս ներկայացված իմ հայտարարագրում գրված է, որ տարեկան աշխատավարձը 1,1 մլն դրամ էր: Ճշտում. 1,1 մլն դրամը լրացված է «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրն ստացված եկամուտները» դաշտում: Քանի որ պաշտոնը ստանձնել եմ 2018թ.-ի հունիսի 11-ին, ուստի նշված 1,1 մլն դրամը 2018թ.-ի հունվար-մայիս աշխատավարձն է:

Հարգանքով՝

ՀՌԻՓՍԻՄԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ